


# ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎ՝ ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ - (Գ. ԵԻ Դ.)

Posted on July 12, 2018 by Keghart



Category: [Opinions](#)



**Ներքոյիշեալ յօդուածին առիթով ընթերցողի ուշադրութեան կը յանձնենք keghart.com-ի Օգոստոս 2013 թուակիր [Catholicos Karekin II Stands Accused](#) խմբագրականը:-**Խմբ.

**Ռուկան Մխիթարեան**, Լոս Անճելըս, 12 Յուլիս, 2018

Դարերու ընթացքին փաստուած իրականութիւն է, թէ մեր կեանքին մէջ Եկեղեցւոյ վերապահուած է կարելոր դերակատարութիւն մը որպէս բարոյական հեղինակութիւն, եւ **ո՛չ թէ բռնակալ իշխանութիւն**, եւ որպէսզի կարենանք ստեղծել այս իտեալ բարոյական հեղինակութիւնը՝ անհրաժեշտ է ունենալ անբասիր զարգացած եկեղեցականութիւն, գիտակից իր ուխտին եւ առաքելութեան, նոյն ատեն ունենալով թափանցիկ կառոյց-կազմակերպութիւն մը՝ իր հոգեւոր եւ վարչական բոլոր բաժանումներով, խարսխուած սահամանադրական բոլոր կանոնագրութեանց վրայ:



**Այս ծաղրանկարի յաւելեալ մեկնաբանութեան համար լսել Սամվել Կարապետեանի**

**[Գարեգին Բ-ի հետ հանդիպման մասին](#) շարժանիկը**

Դժբախտաբար տասնեւինն տարիներու դառն փորձառութիւնը ճիշտ հակառակ պատկերը ցոյց տուաւ: Բռնակալ Գարեգին Բ. կաթողիկոսի **ՀՈԳԵԻՈՐ ՄՊԱՆԴԸ** կը ներկայացնենք համայն հայութեան, տեսնելու այդ տխրահռչակ անձին մէջ՝ քինախնդրութիւնը, ոխակալութիւնը, վրէժխնդրութիւնն ու յիշաչարութիւնը: Ստորեւ՝ ոչ-ամբողջական ցանկը «կարգալոյծ» հռչակուած հոգեւորականներուն:

**Ներքոյիշեալ յօդուածին առիթով ընթերցողի ուշադրութեան կը յանձնենք keghart.com-ի Օգոստոս 2013 թուակիր [Catholicos Karekin II Stands Accused](#) խմբագրականը:-**Խմբ.

**Ռուկան Մխիթարեան**, Լոս Անճելըս, 12 Յուլիս, 2018

Դարերու ընթացքին փաստուած իրականութիւն է, թէ մեր կեանքին մէջ Եկեղեցւոյ վերապահուած է կարելոր դերակատարութիւն մը որպէս բարոյական հեղինակութիւն, եւ **ո՛չ թէ բռնակալ իշխանութիւն**, եւ որպէսզի կարենանք ստեղծել այս իտեալ բարոյական հեղինակութիւնը՝ անհրաժեշտ է ունենալ անբասիր զարգացած եկեղեցականութիւն, գիտակից իր ուխտին եւ առաքելութեան, նոյն ատեն ունենալով թափանցիկ կառոյց-կազմակերպութիւն մը՝ իր հոգեւոր եւ վարչական բոլոր բաժանումներով, խարսխուած սահամանադրական բոլոր կանոնագրութեանց վրայ:



**Այս ծաղրանկարի յաւելեալ մեկնաբանութեան համար լսել Սամվել Կարապետեանի**

**Գարեգին Բ-ի հետ հանդիպման մասին շարժանկարը**

Դժբախտաբար տասնեւինն տարիներու դառն փորձառութիւնը ճիշտ հակառակ պատկերը ցոյց տուաւ: Բռնակալ Գարեգին Բ. կաթողիկոսի **ՀՈԳԵԼՈՐ ՄՊԱՆԴԸ** կը ներկայացնենք համայն հայութեան, տեսնելու այդ տխրահոջակ անձին մէջ՝ քինախնդրութիւնը, ռիսակալութիւնը, վրեժխնդրութիւնն ու յիշաչարութիւնը: Ստորեւ՝ ոչ-ամբողջական ցանկը «կարգալոյծ» հռչակուած հոգեւորականներուն:

**1999-2017 թթ. Գարեգին Բ-ի կողմից կարգալոյծ հռչակուած հոգեւորականների ցանկ**

<b>Մտուն-ազգանուն</b>	<b>ՍԼԱՂԱՆԻ անուն</b>	<b>Հրապարակուած պատճառը</b>	<b>Թուականը</b>
1. Գրիգոր քին. Աւետիսեան	Արծրուն Աւետիսեան	Իրեն վստահուած հօտը լքելու եւ իր բողոքի ցոյցը շարունակելու համար՝ դրսեւորելով անհնազանդութեան ոգի եւ հայ հոգեւորակա- նին անյարիր վարք:	1999
2. Յակոբ քին. Պետրոսեան	Աշոտ Պետրոսեան	Իրեն վստահուած հօտը լքելու և իր բողոքի ցոյցը շարունակելու համար՝ դրսեւորելով անհնազանդութեան ոգի եւ հայ հոգեւորականին անյարիր վարք:	1999
3. Տիրան Արք. Կիւրեղեան	Ղազարոս Կիւրեղեան	Ամենայն հայոց կաթողիկո- սի հայրապետական իշխանութեանը անհնազանդ, հայ եկեղեցականի ուխտին անյարիր եւ Հայ եկեղեցու կանոնների դէմ դատապարտելի գործողութիւն-ների համար:	2001
4. Մակար վրդ. Յովհաննիսեան	Արա Յովհաննիսեան	Իր դիմումի համաձայն:	2001
5. Խորէն արք. Յովհաննիսեան	Նշան Յովհաննիսեան	Հոգեւոր ծառայութիւնը ինքնակամ լքելու և առանց հայրապետական արտօնութեան արտասահման մեկնելու համար:	2002
6. Վահան քին. Արամեան	Գեորգ Արամեան	Անյայտ է:	2003
7. Մաշտոց քին. Իսայեան	Հայկ Իսայեան	Մկրտութեան խորհուրդն աղճատելու եւ հաւաքական մկրտութիւններն արգելող Հայրապետական տնօրինութիւնը զանցառելու համար:	2003
8. Գնէլ արք. Սողոմոնեան	Էդգար Սողոմոնեան	Անյայտ է:	2003
9. Արարատ քին. Յովսէփեան	Նորայր Յովսէփեան	Հոգեւորականին անվայել վարքի եւ կեցուածքի համար:	2004

10. Մաշտոց արդ. ժողովյան	Մուշեղ ժողովյան	Հոգեւոր ծառայութիւնն ինքնակամօրէն լքելու կանոնա-զանց ընթացքի համար:	2004
11. Նարեկ քին. Ահարոնեան	Գարիկ Ահարոնեան	Կարգաւոյժ հռչակուած Ղազարոս Կիւրեղեանի հերժուածին յարելու կանոնազանց ընթացքի համար:	2004
12. Մկրտիչ քին. Սարիբեկեան	Յարութիւն Սարիբեկեան	Անյայտ է:	2004
13. Վահան քին. Սարիբեկեան	Հրանտ Սարիբեկեան	Անյայտ է:	2004
14. Կարապետ քին. Մուլեքեան	Մնացական Մուլեքեան	Անյայտ է:	2004
15. Սահակ քին. Գալստեան	Ռուբէն Գալստեան	Անյայտ է:	2004
16. Սուքիաս քին. Տէրտէրեան	Անդրանիկ Տէրտէրեան	Անյայտ է:	2004
17. Պսակ արդ. Մուրատեան	Արամայիս Մուրատեան	Իր դիմումի համաձայն:	2004
18. Չոհրապ վրդ. Կոստանեան	Հրանտ Կոստանեան	Ծառայութիւնն ինքնակամօրէն լքելու կարգազանցութեան համար:	2005
19. Գարեգին արդ. Յարութիւնեան	Յարութիւնեան	Կանոնազանց ընթացքի՝ հնազանդութեան ուխտը խախտելու համար:	2006
20. Յովհաննէս քին. Սողբաթեան	Օնիկ Սողբաթեան	Անյայտ է:	2006
21. Պետրոս քին. Եզեկեան	Արմէն Եզեկեան	Հոգեւորականին անյարիր վարքի եւ կանոնազանցութեան համար:	2006
22. Խորէն արդ. Չաքարեան	Արտաւազ Չաքարեան	Հոգեւոր ծառայութիւնը թողնելու պատճառով:	2007
23. Աբգար քին. Գըլըճեան	Լեւոն Գըլըճեան	Գրիգորիս Արք. Բունիաթեանի միջնորդագիրը եւ սեփա-կան դիմումի համաձայն:	2007
24. Անանիա արք. Արաբաջեան	Ալետիք Արաբաջեան	Իր դիմումի համաձայն:	2007
25. Ռուբէն քին. Եղիազարեան	Տիգրան Եղիազարեան	Սեպուհ եպս. Չուլջեանի միջնորդագիրը և սեփական դիմումի համաձայն:	2007
26. Ալետիս արդ. Սահակեան	Արտակ Սահակեան	Հոգեւոր ծառայութիւնն ինքնակամօրէն լքելու կանոնա-զանց ընթացքի համար:	2007
27. Եփրեմ արդ. Սարգսեան	Յարութիւն Սարգսեան	Դրսեւորուած անհնազանդ ընթացքի համար:	2007
28. Արշէն վրդ. Սանոսեան	Տիգրան Սանոսեան	Իր դիմումի համաձայն:	2007

29. Վազգէն վրդ. Լանեան	Բաբգէն Լանեան	Հոգեւոր ծառայութիւնը թողնելու սեփական դիմումի համաձայն:	2007
30. Յովհաննէս արք. Մայիլեան	Վարդէս Մայիլեան	Ուխտագանացութեան համար:	2007
31. Նորայր արք. Սիմոնեան	Արման Սիմոնեան	Կանոնազանց ընթացքի համար:	2007
32. Վազգէն քին. Ազիզեան	Ճորճիկ Ազիզեան	Աւագ Արք. Ասատուրեանի միջնորդագիրը՝ կարգազանց ընթացքի պատճառով կարգա- լոյծ անելու վերաբերեալ: Քահանայական կարգից ազատ	2008
33. Ստեփանոս քին. Յակոբեան	Էմիլ Յակոբեան	կացուցանելու վերաբեր- եալ սեփական խնդրագրի համաձայն:	2008
34. Ղուկաս արք. Չաքարեան	Վահան Չաքարեան	Իր դիմումի համաձայն:	2008
35. Կիւրեղ արք. Վարդանեան	Աշոտ Վարդանեան	Իսպանիայում ուսումը եւ հոգեւոր ծառայութիւնը ինքնակամ լքելու պատճառով:	2008
36. Ասողիկ եպս. Արիստակէսեան	Սմբատ Արիստակէսեան	Հոգեւոր ծառայութիւնը թողնելու սեփական դիմումի համաձայն:	2008
37. Վարդան քին. Վարդանեան	Արամ Վարդանեան	Կարգազանց ընթացքի համար:	2009
38. Մխիթար քին. Սարիբեկեան	Միսակ Սարիբեկեան	Քահանայական կոչմանն անյարիր ընթացքի համար:	2009
39. Գեղարդ արք. Վահունի	Վահէ Վահունի	Եկեղեցական ծառայութիւնից հրաժարուելու մասին սեփական խնդրագրի համաձայն:	2010
40. Յակոբ արք. Ապրեսեան	Միրզա Ապրեսեան	Կանոնազանց ընթացքի համար:	2010
41. Դաւիթ արք. Քարամեան	Կարէն Քարամեան	Եկեղեցական ծառայութիւնից հրաժարուելու մասին սեփական խնդրագրի համաձայն:	2010
42. Ղեւոնդ արք. Ղեւոնդեան	Արթուր Ղեւոնդեան	Եկեղեցական ծառայութիւնից հրաժարուելու մասին սեփական խնդրագրի համաձայն:	2010
43. Կտրիճ քին. Դելեջեան	Արմէն Դելեջեան	հոգեւոր ծառայութիւնից հրաժարուելու սեփական դիմումի համաձայն:	2011
44. Սարգիս քին. Յովհաննիս-եան	Արթուր Յովհաննիսեան	Հոգևորականին անյարիր վարքագծի համար:	2011
45. Աբել քին. Մանուկեան	Հրաչ Մանուկեան	Շարունակուող կարգազանց անուղղալ ընթացքի համար՝ ի հետեւումն կախակայման վերաբերեալ 2011 թ. տնօրինու-թեան:	2011
46. Տիրան քին. Աւագեան	Հայկ Աւագեան	Հոգեւոր ծառայութիւնն ինքնակամ լքելու կանոնազանց ընթացքի համար:	2011

47. Հայազատ քին. Գրիգոր Մարտիկեան	Գրիգոր Մարտիկեան	Իր դիմումի համաձայն:	2011
48. Յակոբ քին. Չերքեզեան	Սարգիս Չերքեզեան	Աղան արք. Պալիոզեանի եւ թեմական խորհրդի խնդրանքի հիման վրայ:	2011
49. Աբել արդ. Աբրահամեան	Էդգար Աբրահամեան	Եկեղեցական ծառայութիւնից հրաժարուելու մասին սեփական խնդրագրի համաձայն:	2011
50. Նահապետ քին. Խաչատրեան	Յովհաննէս Խաչատրեան	Հովուական իր ծառայութիւնը լքելու և եկեղեցական ասպարեզից ինքնակամ հրաժարուելու համար:	2012
51. Սարգիս քին. Մելքոնեան	Սարգիս Մելքոնեան	Ծառայութեան ընթացքում դրսեւորած կարգազանցութեան եւ եկեղեցականի վարքին անյարիր ընթացքի համար:	2012
52. Սմբատ արդ. Պօղոսեան	Զանիկ Պօղոսեան	Ծառայութեան ընթացքում դրսեւորած եկեղեցականին անյարիր վարքագծի համար:	2012
53. Արշէն քին. Սարգսեան	Արմէն Սարգսեան	Եկեղեցական ծառայութիւնից հրաժարուելու մասին սեփական դիմումի համաձայն:	2012
54. Ոսկան քին. Բաղդամեան	Վիգէն Բաղդամեան	Եկեղեցական ծառայութիւնից հրաժարուելու մասին սեփական դիմումի համաձայն:	2013
55. Չոհրապ քին. Մազմանեան	Էդգար Մազմանեան	Հովուական ծառայութեան վայրը լքելու համար:	2013
56. Նշան արդ. Պետրոսեան	Արմէն Պետրոսեան	Եկեղեցական ծառայութիւնից հրաժարուելու մասին սեփական դիմումի համաձայն:	2013
57. Եղիա արդ. Խաչատրեան	Արմէն Խաչատրեան	Ուխտազանցութեան եւ եկեղեցականին անյարիր ընթացքի համար:	2013
58. Մխիթար արդ. Գուտուզեան	Սարգիս Գուտուզեան	Եկեղեցականի հնազանդութեան ուխտը դրժելու համար:	2014
59. Մարտիրոս քին. Պերպերեան	Մարտիրոս (Մարտիկ) Պերպերեան	Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի թեմական խորհրդի խնդրանքին ընդառաջ՝ եկեղեցականին անյարիր ընթացքի համար:	2014
60. Յակոբ արդ. Գրիգորեան	Արման Գրիգորեան	Եկեղեցական ծառայութիւնից հրաժարուելու մասին սեփական դիմումի համաձայն:	2014
61. Կարապետ վրդ. Յարութիւնեան	Վարդան Յարութիւնեան	Իր դիմումի համաձայն:	2015
62. Հմայեակ արդ. Սահակեան	Աշոտ Սահակեան	Իր դիմումի համաձայն:	2015
63. Լեւոն արդ. Գուլեան	Դաւիթ Գուլեան	Եկեղեցական կարգը թողնելու մասին սեփական դիմումի համաձայն:	2015
64. Կարապետ քին. Խաչիբաբեան	Կարապետ Խաչիբաբեան	Իր դիմումի համաձայն:	2016
65. Գառնիկ արդ. Մխիթարեան	Մարտին Մխիթարեան	Իր դիմումի համաձայն:	2016

66. Խաղ քին. Ղազարեան	Վիզէն Ղազարեան	Ծառայութեան վայրն ինքնակամ լքելու եւ կանոնաւոր ծառայութեան վերադառնալու ցանկութեան բացակայութեան պատճառով:	2016
67. Յովհաննէս արք. Սահակեան	Վարդգէս Սահակեան	Ծառայութեան վայրն ինքնակամ լքելու պատճառով:	2016
68. Հայրիկ արք. Յովհաննիսեան	Յովիկ Յովհաննիսեան	Ծառայութեան վայրն ինքնակամ լքելու պատճառով:	2016
69. Վռամ արք. Ղազարեան	Ալէտիք Ղազարեան	Իր դիմումի համաձայն:	2016
70. Նիկողոս քին. Յովհաննիսեան	Ալէտիք Յովհաննիսեան	Փաստացի ամուսնալուծութեան եւ հոգեւորականին անյարիր պահուածքի պատճառով:	2016
71. Խաչատուր քին. Գեորգեան	Կարէն Գեորգեան	Իր դիմումի համաձայն:	2017
72. Մովսէս քին. Մանուկեան	Խորէն Մանուկեան	Վազգէն եպս. Միրզախան-եանի միջնորդագիրը՝ հոգեւոր ծառայութեան վայրը ինքնակամ լքելու պատճառով:	2017
73. Խորէն վրդ. Յովհաննիսեան	Նշան Յովհաննիսեան	Վազգէն եպս. Միրզախան-եանի գրուքինը՝ հոգեւոր ծառայութեան վայրը ինքնակամ լքելու պատճառով:	2017
74. Եգրաս քին. Բոգդան	Փառլ Բոգդան	Տաթև եպս. Յակոբեանի և թեմական խորհրդի միջնորդագրի հիման վրա:	201
75. Ահարոն արք. Շահվերդեան	Արթուր Շահվերդեան	Իր դիմումի համաձայն:	2017

2015 թ. դեկտեմբերի 22-ին վերահաստատուել է իր քահանայական կարգի մէջ:  
 Առաջին անգամ կարգաւոյժ է հռչակուել 2002 թ., ապա 2009 թ. ապրիլի 5-ին վերահաստատուել է իր քահանայական կարգի մէջ: 2017 թ. կրկին կարգաւոյժ է հռչակուել նոյն կաթողիկոսի կողմից:

Այս ազնիւ քահանան վերջին զոհերէն ըլլալով, իր ցասումը կ'արտայատէ բռնակալ կաթողիկոսին.-

*«Վեհափառ Տէր, 2015 թ. սկսեալ, ես՝ որպէս Ռումիլիայի Հայոց թեմի փոխառաջնորդ, նամակցութեամբ միշտ տեղեկացրել եմ Ձեզ՝ թեմի առաջնորդ Տաթև եպս. Յակոբեանի անօրէնութիւնների և բարոյագուրկ լինելու վերաբերեալ: Եւ այդ բոլորը՝ փաստերով հանդերձ 2016 թ. ներկայացրել եմ վեց եպիսկոպոսների առջեւ, որոնք նոյնպէս ականջալուր չեղան իմ ասածներին՝ պահանջելով ներկայացնել փաստերը եւ հեռանալ, հակառակ դէպքում, եթէ հրապարակէի, կարգաւոյժ կը լինէի: Իսկ Ձերդ սրբութեան կարգադրութիւնն էր այդ ժամանակ, որ որեւէ խնդիր չբարձրացնեմ եւ վերադառնամ Ռումիլիա և փակեմ խնդիրը:*

*Ես, խոնարհաբար անսացի Ձեր յորդորին, բայց արդիւնքը եղաւ ապարդիւն, ես*

համացանցով կարգալոյծ եղայ... այսօր, թեմը կորցրել է ֆինանսական կարողութիւնների 80 տոկոսը, զրկուել է դարերով թեմին պատկանող հողատարածքներից և այս գործընթացը շարունակական է:

Իմ եւ Տաթև սրբազանի յարաբերութիւնների լարման պատճառը այս ամէնի բարձրաձայնումն էր իմ կողմից Թեմական պատգամաւորական ժողովի ժամանակ եւ որ հանգուցալուծուեց իմ՝ նրա կողմից անբարոյ քայլերի բացայայտումը: Ըստ նրա, վեհափառ Տէր, Դուք յորդորել էիք նրան կին ունենալ, եւ նա առաջարկութիւն էր արել թեմի ռումիւնացի երիտասարդ քարտուղարուհուն, ով եւսպատմել է ինձ եւ ցոյց տուել հաղորդագրութիւնները: Բայց քանի որ սպառնալիքներ է ստացել, ինչորեք լռել այդ մասին: Այդ աղջիկն էլ հեռացել է վաղուց, բայց փատերը կան: Ձայնագրութիւնը... Պատմական թեմի կործանումը Ձեր ուսերին է, քանի որ այս ամէնս իմանալով՝ լռեցիք և փորձեցիք ծածկել»

Իր դիմումին համաձայն կը նշանակէ, որ ենթական ուզած է հեռանալ եկեղեցական ասպարեզէն եւ կամ իրեն թելադրուած է հրաժարական գրել, որպէսզի խայտառակութեամբ չհեռացուի:

Խորհրդածութիւններ կատարելէ առաջ, կարգալոյծ արեղաներէն մէկուն բաց նամակէն մէջբերումներ պիտի կատարեմ, որպէսզի ընթերցողը իմանայ թէ այս երիտասարդ արեղան ի՞նչպիսի հրէշի հետ գործ ունեցած է. պիտի բաւարարուիմ մէկ օրինակով.

«Ձեր կողմից ղեկավարուող օբյեկտը հեռու է եկեղեցի կոչուելուց, քանզի Ձեր նիւթական և փարիսեցիական աշխարհայացքն երբեմնի ծաղկող և հայութեան քաղցր օրօրոց համարուող Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին վերածել է հոգեւոր անապատի՝ լեցուն օձերով և կարիճներով... Ձեզ կը խաբեն ու կ'ասեն, որ վերջին 200 տարիների ընթացքում ոչ մի Հայրապետ այնքան շէնքեր չի կառուցել, որքան Դուք... Մի հաւատացեք, դրանք քծնանքի խօսքեր են... Դուք ոչինչ չէք կառուցել, այլ միայն քանդել էք, եւ դրա վկայութիւն է լեփ լեցուն համասեռամուլ հոգեւորականները, որոնք խրախուսուում են Ձեր կողմից և բարձր պաշտօններ են զբաղեցնում... ո՞ւմ էք Դուք եղբայր եւ կամ ում էք Դուք սիրում: Որեւէ մէկին ոչ Դուք եղբայր էք եւ ոչ էլ հայր, այո, Դուք սիրոյ զգացում ունէք... Ես դա տեսել եմ իմ աչքերով: Դուք սիրում էք դրամ, ոսկի, թանկարժէք քարեր, անխօս ստրուկներ՝ խաչները վզներին, իգացող համասեռամուլների, ու վերջում չմոռանամ ասեմ՝ Դուք սիրում էք Ձեզ: Դուք սիրում էք այն ամէնս, ինչը հոգեւոր կեանքում ոչինչ է համարուում... Յիշիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ճիշտ են ասում՝ ինչքան Գարեգինից հեռու, այնքան Աստծուն մօտիկ, իսկ եթէ չյիշես, կաթողիկոսը քեզ կը յիշեցնի, ու դու մի օր անպայման կը զղջաս, որ պայքարել ես կաթողիկոսի անուան անաղարտութեան համար ընկերներիդ մօտ, կը զղջաս... Մաղթում եմ Ձեզ ոչինչ, քանզի այն ինչ դուք ունէք, ոչինչ է՝ դրամ, ոսկի, թանկարժէք քարեր...»



## (Նախկին միաբան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի. Յովհաննես աբղ. Սահակեան)

Ես երբեք պիտի չուզեի այս ազնիւ օծեալը կոչել նախկին եկեղեցական, որովհետեւ աստուածային ճշմարտութիւնները ճանչնալու, սորվելու եւ պահպանելու համար երաշխիք մըն է օծումը: Որպէս ճշմարիտ քրիստոնեաներ՝ չենք կրնար մոլորիլ մեր հաւատքի կեանքին մէջ, որովհետեւ օծումով խորհրդաւորուած Ս. Հոգւոյն շնորհքը անբաժան է մեզմէ: Հետեւաբար եկեղեցւոյ մէջ կատարուած բոլոր աղօթքներն ու պաշտամունքները, բոլոր խորհուրդներն ու արարողութիւնները, արդիւնք են աստուածային շնորհքի:

Վերջապէս, Աստուծոյ շնորհքն ու կոչումը անփոփոխ են եւ Աստուած չի զղջար զանոնք իր զաւակներուն տուած ըլլալուն համար (Հռոմ. ԺԱ. 29), եւ Առաքեալներ իրենց բոլոր Թուղթերուն մէջ Աստուծոյ շնորհքով կը պարծին, շնորհքի մասին կը խօսին, շնորհքով կ'ողջունեն զիրար, եւ կը մաղթեն որ շնորհքը ամենեւին չպակսի Եկեղեցիէն ընդհանրապէս, եւ իւրաքանչիւր հաւատացեալէ մասնաւորապէս:

Ահաւասիկ այս ճշմարտութիւնը իմանալէ ետք, հիմա հարց կու տանք թէ ինչպէ՞ս կարելի է նման շնորհներով լեցուած անձեր մէկ վայրկեանէն միւսը ապա-շնորհ կոչել եւ յայտարարել՝ թէ այդուհետեւ անոնք կը դադրին ընտրեալ եւ օծեալ ըլլալէ: Կը նմանի այն իրողութեան որ մենք քրիստոնեայ հաւատացեալին ըսենք, որ այսուհետեւ անոր մկրտութիւնն ու դրոշմը յետս կը կոչենք եւ իր ստացած Սուրբ Հաղորդութիւնն ալ, որու միջոցաւ ինք հաղորդակից դարձած էր Ս. Սեղանին վրայ պատարագուած Քրիստոսի Սուրբ Մարմնին ու Արիւնին՝ անվաւեր է...: Կարելի է՞...:

Հետեւաբար, կրնանք բացորոշ կերպով յայտարարել՝ թէ ինչ որ նոյն ինքն Քրիստոսի անունով հաստատուած խորհուրդ է Առաքեալներու մարտիրոսութեամբ վկայուած, **ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ԱՆՁՆՁԵԼԻ Է**, ապա թէ ոչ Եկեղեցւոյ բոլոր ուսուցումներն ու աւանդութիւնները կը դառնան անհեթեթ եւ խաբուսիկ, ինչ որ Գարեգին Բ. կաթողիկոս իր անտառային օրէնքով կը փորձէ համոզել հասարակաթիւնը՝ որպէս թէ այդ բոլորը կարելի են, քանզի ինք օրէնքէ վեր է եւ հետեւաբար իր տնօրինութեամբ ամեն ինչ կարելի է: Ահաւասիկ՝ քրիստոնեական ընդհանուր եկեղեցւոյ հայրերու կողմէ հաստատուած օրէնքները անտեսող եւ ոտնակոխող անհաւատ հերետիկոս մը բազմած է Ամենայն հայոց հայրապետութեան աթոռին:

Եկեղեցին ունենալով օրէնսդրական իրաւունք, ունի նաեւ օրէնքները գործադրելու իրաւունք՝ յանցաւորներու եւ զանցառուներու նկատմամբ, սակայն ըստ ընկալեալ կարգ ու կանոնի: Իւրանքանչիւր յանցանք պէտք է քննուի, պարզուի, ապացուցուի ու ապա ենթարկուի դատապարտութեան: Սակայն այսօր դեմ յանդիման կու գանք **կամապաշտութեան եւ քինախնդրութեան**, որ մեզ կը յուզէ, եւ շփոթի մատնելէ ետք՝ պոռթկում կը յառաջացնէ իր Եկեղեցիով լրջօրէն մտահոգ իւրանքանչիւր հայու մօտ: Այս պարագային, լուռ մնալը ո՛չ թէ անտարբերութիւն է, այլ մեղսակցութիւն, որովհետեւ

իւրանքանչիւր հայ, որպէս մէկ մասնիկը Հայց. Եկեղեցիին, եւ նամանաւանդ  
**իւրաքանչիւր միաբան՝ կրկնակի բարոյական պարտաւորութիւնը ունի իր ձայնը լսելի  
դարձնելու, բողոքելու եւ զգաստութեան կոչ ուղղելու յանուն արդարութեան, ապա թէ  
ոչ Հայց. Եկեղեցին կը դառնայ բացարձակ կղերապետութիւն եւ ճահիճէն դուրս չի  
կրնար ելլել:**

**ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎ՝ ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ – ՇԱՐ. Դ.**

ՈՍԿԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ, 20 Յուլիս 2018

Կանոնական խախտումներու շրջագիծին մէջ կ'իյնան նաեւ քրեական  
յանցագործութիւնները, որոնք կատարուեցան Գարեգին Բ. կաթողիկոսի «հայրական»  
հովանիին եւ ինսամբին տակ: Մեկնութիւնը կը թողունք ընթերցողի հայեցողութեան, իսկ  
մեր խղճի պարտքն է բարձրաձայնել եւ հաշիւ պահանջել կատարուած ոճիրներուն  
համար, որոնք մինչեւ այսօր անլոյծ մնացած են եւ անպայման բացայայտման կարիքը  
ունին:

**Ա.**- Բոլորս ալ գիտենք որ Մայր Աթոռի դիւանապետ Ներսէս արք. Պոզապալեան շատ  
աւելի հաւանականութիւն կը ներկայացնէր ընտրուելու որպէս Ամենայն հայոց  
կաթողիկոս, քան Այրարատեան թեմի առաջնորդ Գարեգին արք. Ներսիսեանը, սակայն  
եւ այնպէս պետական վարչակարգի ամեն տեսակի բռնութիւններուն հետեւանքով  
Գարեգին արք. Ներսիսեան «ընտրուեցաւ», չըսելու համար նշանակուեցաւ, կաթողիկոս:

Հազիւ հայրապետական աթոռ բարձրացած՝ Գարեգին Բ. կաթողիկոս փորձեց  
հեռացնել Ներսէս արքեպիսկոպոսը մայրավանքէն. «*Ապրանքներդ հաւաքէ, գնա  
Երեւան եւ քրոջդ քով ապրիր*»: Ներսէս արքեպիսկոպոս մերժած էր հեռանալ,  
առարկելով թէ մայրավանքը ի՞ր ալ տունն էր: Ո՞վ էր որ այսպէս համարձակութիւն  
կ'ունենար մերժելու բռնակալին հրահանգը. անկասկած որ նման մերժում մը իր դառն  
հետեւանքները պիտի ունենար:

Մեծ ափսոսանքով եւ յուզումով լսեցինք կատարուած ոճիրի մասին : Որպէս թէ  
երիտասարդ մը (կ'ըսուի թէ Յուսիկ սրբազանի թոռնիկն է անչափահաս «հերոսը»)  
յանդգնած էր մայրավանքին մէջ յարձակիլ Ներսէս սրբազանին վրայ ու զայն  
անակնկալի բերելով ծանր հարուածով մը զգետնած էր: Այդ անողորմ հարուածին  
հետեւանքով Ներսէս սրբազան, կորսնցնելով իր գիտակցութիւնը, անմիջապէս  
փոխադրուած էր հիւանդանոց ուր եւ կարճ ժամանակ ետք մտած էր մահաքունի մէջ ու  
մի քանի ամիսներ ետք 27 Յունիս 2009-ին հրաժեշտ տուած էր այս անողորմ աշխարհին,  
միայն ցաւ եւ վիշտ պատճառելով իր անմիջական հարազատներուն:

Թեւեւ ոճրագործին անչափահաս տարիքը որպէս պատրուակ հրապարակ նետուեցաւ  
ցմահ բանտարկութենէ ազատելու համար ենթական, սակայն եւ այնպէս ոճրագործին  
ինքնութիւնն ու տարիքը չեն որ մեզ կը շահագրգռեն, այլ կատարուած ահաւոր  
անմարդկային ոճիրին, --ա՛յդ ալ՝ մայրավանքէն ներս,-- ցարդ անպատիժ մնացած

ըլլալու իրողութիւնն է որ մեզ խորապէս կը մտահոգէ: Հիմա մեր առջեւ կը յայտնուին շատ լուրջ հարցեր, որոնք անմիջական պատասխանի կը կարօտին: Նաեւ այստեղ յիշեցնենք, որ Մայր Աթոռի հաղորդագրութեան մէջ նկարագրուած պատմութիւնը երբեք չի համապատասխաներ իրողութեան:

<https://www.armenianchurch.org/index.jsp?sid=3&nid=1300&y=2009&m=5&d=27&lng=hy>

Հիմա հարց տանք մեր ազնիւ ընթերցողներուն. ինչպէ՞ս կրնայ պատահիլ որ ոճիր մը տեղի ունենայ եւ ծածկուի ոչինչ կատարուածի պէս: Անշուշտ մեր ընթերցողները այդքան ալ պիտի չզարմանան, որովհետեւ նմանօրինակ սպանութիւններ սովորական երեւոյթ դարձած են ամբողջ հայրենիքի տարածքին: Վերջերս բոլորս ալ կարդացինք մամուլի մէջ Մանուէլ Գրիգորեանի քրեական յանցանքներուն մասին, եւ այդ բոլորը, ժողովրդական խօսքով՝ «Մայր Աթոռի քթին տակ»:

Պահ մը իրաւաբանօրէն մտածենք որպէս արդար եւ զարգացած քաղաքացի: Ինչպէ՞ս կրնայ ըլլալ որ նման ոճիրի մը համար, --ի վերջոյ մարդ արարած մըն է սպաննուողը,-- քրեական հարց չէ յարուցուած եւ ո՛չ ալ քրեական թղթածրար մը բացուած՝ ոճիրին բոլոր ծալքերը իմանալու եւ, ուսումնասիրելէ ետք, հետապնդելու եւ դատապարտելու ոճրագործը: Ո՞ւր մնաց արդարութիւնը...: Անգամ մը եւս կը փաստուի նախորդ վարչակարգին քրեական մտածողութիւնն ու անտարբերութիւնը իր քաղաքացիին հանդէպ: Երբեք պիտի չզարմանանք երբ շատեր մտածեն որ այս բոլորը կանխամտածուած եւ պատրաստուած ոճիրներ են: Եզրակացութիւնը կը թողունք մեր ընթերցողներու հայեցողութեան:

**Բ.**- Այսքան տարիներ ետք տակաւին չենք համոզուած որ տարիներու վաստակ ունեցող բարձրաստիճան եկեղեցական՝ Արսէն արք. Պերպերեան նո՛յնքան տխուր վախճան կրնար ունենալ: Մօտէն ճանչցած եմ զինք 1970 թուականէն, երբ ստանձնած էր Լոնտոնի եկեղեցւոյ հովուութիւնը: Տարիներ ետք կրկին տեսնուեցանք Միացեալ Նահանգներու մէջ, երբ արդէն որոշ չափով կորսնցուցած էր իր առողջական վիճակը: Մեր երկրորդ հանդիպումը նպաստաւոր եղաւ սրբազանին համար, որովհետեւ հանդիպեցանք ճիշդ այն ժամանակ երբ կարիքը ուներ աչքի գործողութեան, սակայն եւ այնպէս մէկը չկար որ ձեռք երկարեր անոր՝ որպէսզի վիրաբուժութեամբ վերականգնէր իր տեսողութիւնը, ո՛չ ալ մայրավանքը հետաքրքրուած էր անոր բարուք կեցութեամբ Լոս Անճելըսի մէջ: Ազնիւ հայորդիներ հոգացին իր տնային եւ կարգ մը առօրեայ ծախսերը, ես ալ որպէս կրտսեր եղբայր յաջողցուցի իր աչքի գործողութիւնը: Մեր երկրորդ հանդիպումը աւելի սերտացուց մեր կապերը եւ հետեւաբար մեր յաճախակի շփումներով ու հանդիպումներով աւելի մօտէն ճանչցայ Մայր Աթոռի միաբանութեան անփառունակ վիճակը:

Երկար ժամանակ կազդուրուելէ ետք, Արսէն սրբազան պատշաճ նկատեց վերադառնալ տուն՝ Մայր Աթոռ: Մեր կապերը մնացին նոյնքան եղբայրական, եւ մեր յաճախակի շաբաթական հեռախօսազանգերը եղան լաւագոյն միջոցը իրարու հետ բաժնելու մեր

Եկեղեցական եւ ազգային մտահոգութիւնները: Յաճախ կը գանգատեր որ եղբայրական մթնոլորտ չկար մայրավանքէն ներս, ուր մանաւանդ տարեցները անտեսուած էին: Յաճախ կը կրկնէր որ առանձնութենէ կը տառապէր, եւ սակայն կը միտիթարուէր մէկ-երկու ազնիւ արեղաներու այցելութեամբ:

Եպիկոպոսական ընդհանուր ժողովի օրերուն (Սեպտ. 24-27, 2013թ.) ամէն օր կը խօսէինք եւ յաճախ բացայայտօրէն կը փոխանցէր իր մտածումները ժողովի մասին, ըսելով թէ «ոչինչ դուրս կը գայ այս անծրագիր ժողովներէն: Միակ դրական երեւոյթը այս ժողովին ա՛յն եղաւ որ իրարու հետ նկարուեցինք...»: Թէեւ քմծիծաղով կ'ըսէր այս բոլորը, բայց ասոր ետին կար տխրութիւն որ Հայց. Եկեղեցին հասած է այսպիսի օրերու. ճահճացած, հոգեւորապէս սնանկացած ու խորթացած իր ժողովուրդէն:

Մայրավանքին ճնշող մթնոլորտը պատճառ դարձաւ որ ան աւելի ժամանակ անցնէ Երեւանի իր առանձնատան մէջ: Ահաւասիկ հոն էր որ անակնկալօրէն աւանդեց իր հոգին, 16 Նոյեմբեր 2013-ին: Մահուան նախորդ գիշերը, ժիր ու կայտառ, իր խօսակիցներուն հետ (սրբազանին խնամակալն ու սիրելի վարդապետ մը) լաւ ժամանակ կ'անցնէր, երբ յանկարծ անկնկալ այցելութեան եկաւ Երեբունի հիւանդանոցէն բուժքոյր մը եւ սրբազանին տուաւ մասնաւոր դեղահատեր, ի զարմանս ներկաներուն: Բաւական ուշ մնալէ ետք հիւր վարդապետը մեկնեցաւ իր հարազատներուն տունը: Չարմանալին ա՛յն է որ յաջորդ առաւօտ այդ նոյն բուժքոյրը առաւօտեան ժամը 6:00-ին Արսէն սրբազանի տունէն եւ անոր անձնական հեռաձայնով կը զանգէ վարդապետին՝ սրբազանին մահուան գոյժը հաղորդելու: Թէ՛ խնամակալը եւ թէ՛ վարդապետը կը զարմանան որ նախորդ գիշերուան կայտառ եւ ժպտուն սրբազանին ի՞նչ պատահեցաւ եւ ինչպէ՞ս կրնայ ըլլալ որ այդքան կանուխ այդ բուժքոյրը կրկին այցելութեան եկաւ սրբազանին: Անլոյծ մնացած հարցումներ: Նկատի ունենալով որ Արսէն սրբազան մահացած էր իր տան մէջ եւ ոչ թէ հիւանդանոցի, հետեւաբար պետական պաշտօնական հաստատութիւնը պարտաւոր էր անմիջապէս դիագնոստիկ կատարել, ստուգելու համար մահուան պատճառը: Կարելի չէ նման պարագային հանգուցեալը տանիլ եւ թաղել առանց դիագնոստիկ, առիթ տալով խորհրդաւոր վերլուծումներու: Եթէ մաքուր են մեր արարքները, հետեւաբար պետք է անպայմանօրէն դիագնոստիկ կատարուէր աւելորդ մեկնաբանութիւններու առիթ չտալու համար: Արսէն սրբազանի հարազատները Հայաստանի եւ սփիւռքի մէջ տակաւին կը սպասեն տրամաբանական պատասխանի:

**Գ.-** Մայր Աթոռի պաշտօնական հաղորդագրութեան մէջ կը կարդանք որ 7 Մարտ 2015-ին Գրիգորիս արք. Բունիաթեան, Ուքրանիոյ Հայոց Թեմի Առաջնորդ, յանկարծամահ եղած է հիւրանոցի իր սենեակին մէջ: Հաւատա՞նք...:

Մամլոյ եւ պաշտօնական հաղորդագրութեան մէջ արձանագրուածները որեւէ կերպով չկրցան համոզել ստուար հասարակութիւնը որ սրբազանին մահը հետեւանք էր սրտի անհանգստութեան: Ո՛չ մէկ բժշկական վկայութիւն կայ որ սրբազանը սրտի

հիւանդութենէ կը տառապէր. ընհակառակն՝ իր միաբանակից եղբայրները կը վկայեն որ շատ առողջ էր եւ կայտառ: Մեզ անհանգստացնողը հանրութեան մօտ շրջագայող լուրերն են որոնց աղբիւրը կարելի չէ ստուգել, եւ հետեւաբար այս կապակցութեամբ տրուած զանազան մեկնաբանութիւնները մեզ կը մտահոգեն.--

1.- Թէ՛ մահացած է պանդոկին մէջ, կիսամերկ վիճակով:

2.- Թէ՛ մահացած է պանդոկին մէջ, ամբողջ գիշեր խմելէ ետք:

2.- Թէ՛ մահացած է ուրիշ վայր մը եւ յետոյ բերուած է պանդոկ:

3.- Ամենէն ընդհանրացած վարկածը այն է, որ սրբազանը սպաննուած է վրէժխնդրութեամբ, ուրբանացիներու կողմէ:

Մանրամասնենք, որպէսզի ընթերցողը հասկնայ: Մեր ստացած տեղեկութիւններու համաձայն, Գրիգորիս սրբազան ինքնաշարժի արկածով ակամայօրէն սպաննած է փոքրիկ ուրբանացի երախայ մը: Հարցը հասած է քրեական դատարան: Կը կարծուի թէ Գարեգին Բ. կաթողիկոս իր քաղաքական լծակներու միջոցաւ կրցած էր դատարանի առջեւ փրկել Գրիգորիս սրբազանը շատ լուրջ օրինական պատասխանատուութենէ...: Տուժող կողմը, այսինքն մեռեալ երախային հարազատները, նկատի առնելով իրենց հանդէպ եղած անարդարութիւնը դիմած են փոխվրէժի եւ Գրիգորիս սրբազանը սպաննած: Եթէ այս բոլորը ճիշդ չեն, ապա ո՞ր է յարուցուած քրեական թղթածրարը: Ինչո՞ւ իրականութիւնը չենք յայտնել մեր ժողովուրդին, որպէսզի զանազան մեկնաբանութիւններու առիթ չընծայենք: Եթէ սրբազանը իսկապէս յանկարծամահ եղած է, ա՛յդ ալ՝ պանդոկին մէջ, ուրեմն անպայման որ դիագնոստիկ կատարուած է, եւ հետեւաբար հարց կու տանք. ո՞ր է արդիւնքը այդ դիագնոստիկի: Մեր գաղտնածածուկ գործելակերպով կը բարդացնենք հարցերը եւ առիթ եւ իրաւունք կու տանք մեր ժողովուրդին՝ մեզմէ հաշիւ պահանջելու: Ի վերջոյ բարձրաստիճան եկեղեցական մը մահացած է, որուն մահուան պարագաները կը մնան անյայտ:

Վերեւ յիշատակուածներէն զատ կան նաեւ ազնիւ եկեղեցականներ, որոնք այս կեանքէն հեռացան չդիմանալով իրենց հանդէպ եղած հալածանքներուն եւ անարդարութեանց, կատարուած, նամանաւանդ, Գարեգին Բ. կաթողիկոսի «բարձր տնօրինութեամբ»: Պիտի ուզէի անպայման այստեղ յիշատակել Տէր Մարտիրոս քին. Պերպերեանի պարագան: Չորս տարիներու վրայ երկարող անմարդկային «եղբայրակա՛ն» հալածանքներու զոհ դարձած այս մեծահոգի, ազնիւ անձնաւորութիւնը իր աչքերը փակեց ու այս ստորնացած աշխարհէն մեկնեցաւ «վիրաւոր»: Տէր Մարտիրոս արժանի չէ՛ր իր կրած հալածանքին: Բոլորիս ծանօթ՝ Լիբանանի մէջ երկար տարիներու ազգային եւ եկեղեցական ասպարեզէն ներս ազնիւ ծառայութիւն մատուցած Նուպար սարկաւազ Պերպերեանի որդին էր ան, մեծցած հոգեւոր մթնոլորտի մէջ:

Դժբախտաբար, այս համատարած փտութեամբ՝ եկեղեցական հանրային-հասարակական կեանքն է որ կը քայքայուի, եւ չենք կրնար այսուհետեւ քար

անտարբերութեամբ դիտել մեր համազգային նուիրականութիւններու հանդէպ գործուած անպատկառ խախտումներու հետեւանքով յառաջացած անմխիթար դրութիւնը:

Ստալինեան սկզբունքներով ու գործելաճով մեծցած, եւ իր անօրէնութեան մէջ յղփացած կղերապետութեան խորտակումը շատ հեռու չէ, եւ արդէն ոտնաձայները կը լսենք ամէն օր...: Ամէն:

